հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 011303303/26/, 010461841
sa.gnumner@mail.ru
"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

№ 4/04-128 «21» մարտ 2023թ.

«ՍՈՒՐ ԵՎ ՆԻԶԱԿ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Կ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը լուծելու մասին

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «Սուր և նիզակ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Կատարող) միջև 2023 թվականի փետրվարի 20-ին կնքվել է «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Անվտանգության ապահովման/Պահնորդական» ծառայությունների մատուցման թիվ ՍԱԲԿ-ԳՀԾՁԲ-23/3 պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Համաձայն 20.03.2023թ-ին «Սուր և նիզակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ Ս-005 գրության Կատարողը առաջարկում է լուծել Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը 62096 /վաթսուներկու հազար իննսունվեց/ կազմում է ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 93145 /իննսուներեք հազար մեկ հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023 թվականի մարտի 30-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների գումարները, ապա Կատարողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի 220095140228000 հաշվեհամարին և վճարված կտրոնները ներկայացնել Պատվիրատուի գնումների բաժնին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԿ ՓԲԸ ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժին
Հեռ.՝ (010) 461740, (011) 303303 /26/